,

Երիտասարդ Պատմագետների Ասոցիացիա ՀԿ-ի

EduArmenia նախաձեռնություն

Ուսուցիչների պետական պարտադիր վերապատրաստման դասընթաց 2022

Հետազոտական աշխատանք

Թեմա՝ Ինչպես են դեռահասի հոգեբանական առանձնահատկությունները ազդում նրա ուսումնառության արդյունավետության վրա:

Հետազոտող ուսուցիչ՝ Հայրապետյան Գոհար

Երևանի Ստեփան Զորյանի անվան հ.56 հիմնական դպրոց

Բովանդակություն

1.Ներածություն.....3

2.Տեսական մաս

.Երեխայի զարգացման պրոցեսում դեռահասության փուլի տեղն ու նշանակությունը.....5

.Դեռահասության ճգնաժամի ախտանշաններն ու դեռահասությանը բնորոշ անձնային
առանձնահատկությունները.....7

3.Ինչպես են դեռահասի հոգեբանական առանձնահատկությունները ազդում նրա ուսումնառության արդյունավետության վրա 10

4.Եզրակացություն.....17

5.Օգտագործված գրականություն.....18

Ներածություն

Դեռահասությունը մանկական տարիներից ամենաբարդն ու ամենադժվարն է և իրենից ներկայացնում է անձի ձևավորման ժամանակաշրջան:Դրա հետ մեկտեղ դա ամենապատասխանատու ժամանակաշրջանն է, այստեղ են ձևավորվում բարոյականության հիմքերը, սոցիալական դիրքորոշումները, հաստատուն են դառնում բնավորության գծերը: Դեռահասի մոտ տեղի ունեցող լուրջ փոփոխությունները վերաբերվում են կյանքի բոլոր ոլորտներին: Հատկապես նկատել փոփոխություններ է կրում կրթական գործունեությունը: Պատանեկության տարիներին սկսվում է գիտությունների հիմքերի համակարգված յուրացումը, որը պահանջում է աշխատանքի սովորական ձևերի փոփոխություն և մտածողության վերակազմավորում, ուշադրության կենտրոնացում: Դեռահասությունը հետաքրքրող մտքի, գիտելիքների ագահ ցանկության փնտրելու տարիք է, հատկապես եթե այն ունի սոցիալական նշանակություն:

Բազմաթիվ խնդիրների հետ մեկտեղ, որոնց մասին կխոսենք հոդվածի մյուս բաժիններում, թեմայի առանցքային բաժինը վերաբերվում է այն խնդիրներին և խոչընդոտներին, որոնք ստեղծվում են դեռահասների մոտ՝ կապված ուսումնական գործընթացի հետ և ազդում են ուսումնառության արդյունավետության վրա:

Կրտսերից միջին դպրոց գնալիս աշակերտները բախվում են հարմարման դժվարությունների, ինչպես նոր դպրոց մուտք գործելիս: Հոգեբանական այդ դժվարությունները կապված են նաև նոր առարկաները յուրացնելու, նոր ուսուցիչների հետ հարաբերվելու հետ: Եվ այստեղ են կարևորվում այն գործողությունները, որոնք պետք է իրականացնի ուսուցիչը դեռահասության շեմը մուտք գործած երեխայի լիարժեք ուսուցումն ապահովելու համար, քանի որ ուսուցումը երեխայի հոգեկան զարգացման համար վճռական դեր է խաղում: Չնայած զարգացման ընթացքում երեխայի մոտ ձևավորվող դրդապատճառների բազմազանությանը, շատ հետազոտողների, հոգեբանների կողմից ապացուցվել է, որ ուսուցման

բովանդակությունը,գործունեության եղանակները փոփոխելով կարելի է էական փոփոխություններ առաջացնել նաև նրա զարգացման պրոցեսում[1]:

Աշխատանքի նպատակն է ներկայացնել այն հիմական պատճառները, որոնք ազդում են դեռահասի առաջադիմության վրա՝ պայմանավորված նրա հոգեբանական առանձնահատկություններով, և, թե ինչպիսին պետք է լինի մանկավարժական գործունեությունը՝ դեռահասի անձի ձևավորման, ուսումնական գործընթացի համար առավել արդյունավետ պայմաններ ստեղծելու համար:

[1] https://docs.google.com/document/d/1UrSMLCz6OEcGKLUPQyZDtJRVEzt7jDul/edit#:

Գլուխ 1

Երեխայի զարգացման պրոցեսում դեռահասության փուլի տեղն ու նշանակությունը

Տարիքի առանձնահատկությունները որոշվում են մի շարք պայմաններով. կյանքի տվյալ փուլում երեխային ներկայացվող պահանջների ամբողջությամբ, շրջապատի հետ ունեցած փոխհարաբերությունների յուրահատկություններով, երեխայի անձի հոգեբանական զարգացման մակարդակով, նրա գիտելիքների և մտածողության զարգացման մակարդակով, ֆիզիոլոգիական առանձնահատկությունների ամբողջությամբ: Երեխայի անձի ձևավորման մեջ առանցքային է համարվում դեռահասության փուլը:

Դեռահասության փուլի սահմանները տարբեր գրականությունների մեջ տարբեր են, մոտավորապես համընկնում են միջին դպրոցի 5-8-րդ դասարանների հետ և ընդգրկում են 11-12 տարեկանից մինչև 14-15 տարեկանը, իսկ ժամանակակից Եվրոպական երկրներում 16-21 տարեկանն ընկած ժամանակահատվածը: Այս տարիքը համարվում է անցումային մանկությունից դեպի պատանեկություն: Հոգեբանները այս տարիքը համարում են "ճգնաժամային", "անցման", "դժվար" շրջան, քանի որ կապված է երեխաների հոգեբանական և ֆիզիոլոգիական ամբողջական փոփոխությունների հետ: Դեռահասության փուլը կարևոր է նրանով, որ այստեղ դրվում է անձի բարոյական ու սոցիալական դիրքորոշումների հիմքը և ուրվագծվում է դրանց հետագա զարգացման հիմնական ուղղությունները: Հենց այս տարիքում է մարդն անցնում իր զարգացման կարևորագույն ուղին՝ հաղթահարելով ներքին և արտաքին բազմաթիվ կոնֆլիկտներ ու հակադրումներ, ձեռք բերելով անձնավորություն լինելու զգացողություն:

Դեռահասի անձնավորության զարգացման առաջին գործոնը հենց իր հասարակական ակտիվությունն է. նա ծրագրավորում է իր անձն ու ապագան և փորձ

է կատարում իրականացնել իր մտադրությունները, նպատակներն ու խնդիրները: Սակայն նորի գոյացումը ժամանակ է պահանջում և կախված է մեծ թվով պայաններից: Այդ է պատճառը, որ դեռահասի մոտ միշտ գոյակցում են "մանկականությունն" ու "հասունությունը": Ըստ հասունության տարբեր դրսևորումների զարգացման մակարդակի նույն տարիքն ունեցող տարբեր դեռահասների մոտ էական տարբերություններ են նկատվում: Օրինակ՝ 7-րդ դասարանում հանդիպում են մանկական տեսք ու հետաքրքրություններ ունեցող տղաներ, բայց կան նաև շատ հասուն տղաներ, որոնք շփվել են չափահասների կյանքի որոշ կողմերի հետ: Որոշ աղջիկներ ամբողջությամբ ներգրավված են ուսումնական գործընթացում, ունեն լայն հետաքրքրություններ, շատ են կարդում, իսկ մյուսներից շատերը մտածում են միայն նորաձևությունների և տղաների մասին: Հասունության զարգացման մակարդակի վրա ազդող գործոնները կարելի է խմբավորել երկու խմբում.

1.Արգելակող գործոններ-ուսումնական գործունեությամբ զբաղված լինելը, լուրջ պարտականությունների բացակայությունը, ծնողների կողմից ամեն ինչում խնամակալելու հատկությունը: Դեռահասի վարքագծում գերիշխող է մանկականությունը:

2.Հասունացնող գործոններ-ինֆորմացիայի մեծ հոսքը, ֆիզիկականն և սեռական հասունացման աքսելերացիան, ծնողների գերծանրաբեռնվածության արդյունքում երեխաների վաղահաս ինքնուրույնությունը: Դեռահասն իրեն համարում է հասուն և պահանջում, որ իրեն վերաբերվեն որպես չափահաս:

Դեռահասության փուլն ընդունված է համարել դժվարին ու ճգնաժամային, քանի որ այս տարիքում կտրուկ փոփոխվում են նաև երեխայի հետաքրքրությունները, հների փոխարեն նորերն են ի հայտ գալիս: Այդ փոփոխություններն ուղեկցվում են դեռահասի հոգեկանում տարատեսակ սուբյեկտիվ դժվարությունների առաջացմամբ, դեռահասը դառնում է անհնազանդ, դիմադրող, կամակոր, կոպիտ, ըմբոստ, մեկուսացված, գաղտնապահ: Հնարավոր է, որ դեռահասն իրեն այնպես դրսևորի, որ թվա, թե նրա մոտ լրիվ բացակայում է ինչ-որ բանի նկատմամբ հետաքրքրությունը:

Այս շրջանում նկատվում է նաև դպրոցի գնահատականների նկատմամբ հետաքրքրության բացակայություն:

Այս տարիքում երեխայի օրգանիզմում արմատական փոփոխություններ են տեղի ունենում, որոնք տանում են դեպի կենսաբանական հասունության, ծավալվում է նաև սեռական հասունացման պրոցեսը: Օրգանիզմի ներքին միջավայրում տեղի ունեցող փոփոխությունները, մտավոր ու ֆիզիկական գերհոգնածությունը, նյարդային տևական լարվածությունը կարող են առաջացնել էնդոկրինային համակարգի աշխատանքի և նյարդային համակարգի ֆունկցիոնալ խախտումներ: Հենց այս փոփոխություններն են հիմնական պատճառը դեռահասի ընդհանուր անհավասարակշռվածության, դյուրագրգռության, բռնկվողության, շարժողական ակտիվության, պարբերաբար վրա հասնող ալարկոտության և անտարբերության: Դեռահասության շրջանում արագ փոխվում են ոչ միայն ներքին հոգեկան աշխարհը, այլ նաև արտաքին ֆիզիկական տվյալները՝ հասակը, քաշը, մարմնի համամասնությունները: Արտաքին այդ փոփոխությունները հանգեցնում են մարմնի որոշակի անհամաչափությունների և դեռահասն իրեն հաճախ զգում է ոչ գրավիչ, ձևավորվում են տարբեր բարդություններ, որոնցից որոշները ուղեկցում են ողջ կյանքի ընթացքում: Դեռահասի արտաքին տեսքը հաճախ կոնֆլիկտների պատճառ է դառնում ընտանիքում:

Գլուխ 2

Դեռահասության ճգնաժամի ախտանշաններն ու դեռահասությանը բնորոշ անձնային առանձնահատկությունները

Դեռահասության տարիքի "ճգնաժամի" բացատրման գործում հոգեբանները եկել են մի շարք ընդհանրացումների, որոնց հիմնական իմաստը հետևյալն է. դեռահասության տարիքի ընթացքի ու դրսևորման առանձնահատկությունները պայմանավորված են դեռահասի կյանքի ու զարգացման կոնկրետ սոցիալական հանգամանքներով, չափահասների հասարակության մեջ նրա գրաված դիրքով: Լև Վիգոտսկու կարծիքով՝ դեռահասական տարիքի հիմնական հակասությունն այն է, որ սեռական զարգացումը, սոցիալ- մշակութային զարգացումը և համաօրգանական աճի ավարտը չեն համընկնում:

Ճգնաժամի ախտանշաններ են.

. ուսումնական մոտիվացիայի պակաս

.մեծահասակ լինելու ձգտում, նոր իրավունքների պնդում

.կոնֆլիկտ ծնողների, ուսուցիչների հետ

.բողոքական վարքագիծ

.անլիարժեքության զգացում

.ընկճվածություն

.տագնապներ

Դեռահասությանը բնորոշ անձնային առանձնահատկություններ են՝.

- Անձնային անկայունություն-դրսևորվում է տրամադրության հաճախակի տատանումներով, աֆեկտիվ բռնկունակությամբ, հուզական անկայունությամբ՝ պայմանավորված օրգանիզմում ֆիզիոլոգիական վերակառուցման գործընթացով: Պետք է ասել, որ անձնային անկայունությունն ավելին են, քան միայն հուզական ֆոնի տարածումը: Ինչպես գրում է Լ.Ս.Վիգոտսկին՝ " ....դեռահասի անձի կառուցվածքում չկա ոչ մի կայուն, վերջնական, ավարտուն բան":
- Բարոյական անկայունություն-ըստ Լ.Կոլբերգի՝ կրտսեր դպրոցական և դեռահասության տարիքում երեխաներն ունեն ձևավորված կոնվենցիոնալ բարոյականություն, որի դեպքում երեխան դեռևս չունի իրական բարոյականություն և բարոյական նորմերը նրա համար ինչ-որ արտաքին պահանջներ են: Դեռահասների մեծ մասը հետևում է այդ նորմերին, որպեսզի արդարացնի ինչ-որ նշանակալի մարդկանց սպասելիքները, պահպանի լավ հարաբերությունները և խրախուսանք ստանա:
- "Չափահասության" զգացում- դեռահասն այլևս չի ընդունում երեխաների խմբին իր պատկանելիությունը, բայց նրանում դեռևս չկա իսկական, լիարժեք չափահասության զգացում, թեև նա ձգտում է դրան և շրջապատի կողմից որպես չափահաս գնահատվելու կարիք է զգում: Չափահասների հետ իրենց հավասար

զգալու ցանկությունը դեռահասները դրսևորում են արտաքնապես նրանց նմանվելու, նրանց կյանքի ու գործունեության որոշ կողմերի հետ առնչվելու, նրանց որակները, հմտությունները, իրավունքներն ու արտոնությունները ձեռք բերելու ձգտման ձևով:

- Անկայուն ինքնագնահատական - դեռահասը փորձում է հասկանալ ինքն իրեն և իր մեջ նոր բաներ է բացահայտում: Նրա "ես"-ի տարբեր պատկերները փոփոխական են: Նա ցանկանում է լինել բոլորի նման՝ միևնույն ժամանակ ամեն կերպ փորձելով առանձնանալ բոլորից: Նա պայքարում է հեղինակությունների դեմ, համընդհանուր նորմերի, կանոնների և իդեալների դեմ, բայց միևնույն ժամանակ աստվածացնում է պատահական կուռքերին: Նոր "ես:-ի ձեռք բերման հետ կապված դեռահասները դառնում են ավելի տագնապային և չեն ցանկանում շատ անգամ տանից դուրս գալ, ընդգրկվել հասարակական խմբերի մեջ, քանի որ վախենում են ծիծաղելի թվա:լ

Դեռահասության անկայունության և հակասականության մասին շատ լավ է ասել Աննա Ֆրոյդը. «Դեռահասներն առանձնահատուկ եսասերներ են, իրենց տիեզերքի կենտրոն են համարում, և ուշադրության արժանի միակ օբյեկտ, բայց միևնույն ժամանակ իր կյանքի հետագա ոչ մի փուլում նա ընդունակ չէ այդչափ ինքնանվիրման և ինքնազոհաբերման, որքան այս տարիքում: Նրանք կարող են ընկնել կրքոտ սիրային հարաբերությունների մեջ միայն նրա համար, որ հետո նույնքան անսպասելիորեն ընդհատեն այդ հարաբերությունները: Մի կողմից՝ նրանք խանդավառությամբ ներգրավվում են կոլեկտիվի կյանքի մեջ, մյուս կողմից՝ ուժգնորեն մենակության են ձգտում: Նրանք եսասեր ու մատերիալիստ են, սակայն միևնույն ժամանակ ժուժկալ են, բայց հանկարծակի կարող են սանձարձակ դառնալ: Նրանց վերաբերմունքն ուրիշների նկատմամբ կարող է շատ կոպիտ և աննրբանկատ լինել, չնայած որ իրենք շատ զգայուն և խոցելի են: Նրանց տրամադրությունը տատանվում է պայծառ լավատեսությունից մինչև գորշ հոռետեսություն»:[2]

Անկայունությամբ, ծայրահեղությունների մեջ ընկնելու հակումով, արտաքին այլ ազդեցություններով են պայմանավորված այս տարիքում հանդիպող սոցիալական

[2] https://www.mapa.am/dastiarakutyany-hatuk-khndirner/:

խնդիրները՝ վաղ ալկոլոհամոլություն, տոքսիկոմանիա, թմրամոլություն, ինքնասպանություն: Վատթարագույն նման հետևանքներին հանգեցնում է մեկուսացվածությունը, տանը և դպրոցում չհասկացվածության զգացումը, ասոցիալ խմբի հասակակիցների հետ հանդիպումները:

- Կախվածություն համացանցից, սոցիալական կայքերից-ժամանակակից աշխարհում ինտերնետը և սոցիալական ցանցերը հանդես են գալիս իբրև երկրորդային սոցիալականացման հզոր գործոններ, որի ընթացքում ձևավորվում են արժեքներ, հետաքրքրություններ, նպատակներ, երբեմն հաղթող են դուրս գալիս իրական առաջնային սոցիալականացման հետ մրցակցությունում: Այս առումով բավականին խոցելի իրավիճակում են հայտնվում դեռահասները, որոնք ունեն հոգեբանական անկայունություն, բարձր ներշնչվողականություն, ակտիվություն և հակասական ընկալումներ: Օրվա զգալի մասը սոցիալական ցանցերում գտնվելը ազդում է դեռահասի մտածողության, արժեհամակարգերի, բարոյական գիտակցության ձևավորման, կյանքի նպատակների, վարքային մոդելների, նախընտրությունների փոփոխման վրա: Սոցիոմշակույթային ռիսկերից խուսափելու համար անհրաժեշտ է ստեղծել նորարարական վերահսկիչ համակարգեր և առավելագույն օգտագործել ինտերնետի ինֆորմացիոն հնարավորությունները՝ ձևավորելու այնպիսի սերունդ, որը կունենա ոչ միայն սպառողական հոգեբանություն, այլ գործուն մասնակցություն կցուցաբերի սոցիալական և մշակույթային կյանքում[3]:

Դեռահասի անմիջական դաստիարակների՝ ծնողների և ուսուցիչների պարտականությունն է օգնել նրան չափահասների աշխարհին հատուկ արժեքների յուրացման և այդ աշխարհը մուտք գործելու խնդրում, այլապես դեռահասն այդ աշխարհը կթափանցի առանց նրանց օգնության: Կօգնեն ընկերները, բարեկամները և այլ չափահասներ, և նրա անձնավորության զարգացման շատ կարևոր կողմեր կարող են դուրս մնալ վերահսկողությունից:

[3] https://docs.google.com/document/d/1UrSMLCz6OEcGKLUPQyZDtJRVEzt7jDul/edit#:

Գլուխ 3

Ինչպես են դեռահասի հոգեբանական առանձնահատկությունները ազդում նրա ուսումնառության արդյունավետության վրա

Իսկ ի՞նչպես է անդրադառնում դեռահասի հոգեվիճակը նրա ուսումնական գործընթացի, առաջադիմության վրա: Դասավանդման տարիների ընթացքում առնչվել եմ տարբեր հոգեվիճակ ունեցող դեռահասների հետ, որոնք այս կամ այն պատճառով կորցրել են հետաքրքրությունը ուսման, կրթական գործընթացի նկատմամբ: Մոտեցումներս եղել են, իհարկե, տարբեր յուրաքանչյուրի նկատմամբ, որոշ դեպքերում հաջողվել է արդյունքի հասնել, որոշ դեպքերում՝ ոչ: Հետևություններ կատարելով ինձ հանդիպած իրավիճակներից, փորձել եմ ներկայացնել այն հիմնական պատճառները, որոնք ազդում են դեռահասության բարդ փուլում գտնվող

սովորողի ուսումնական գործընթացի վրա և ավելի մանրամասնորեն խոսել դրանցից թերևս ամենագլխավորի՝ ուսուցչի կերպարի մասին, և, թե ինչպիսի ազդեցություն է ունենում նոր մանկավարժը դեռահասության սկզբնական փուլում սովորողի հուզական աշխարհի և կրթական գործընթացի վրա:

- Անարդարության զգացողությունը իր անձի նկատմամբ:

Դեռահասն ակնկալում է արդարություն բոլոր հարցերում, բայց հատկապես իր նկատմամբ արդարության դրսևորման գլխավոր գործոն է համարում գնահատականը: Ճշգրիտ, օբյեկտիվ գնահատականը կրթական գործընթացում առանցքային տեղ ունի, քանի դեռ մեր կրթական համակարգում սովորողների գիտելիքների գնահատումն իրականացվում է միավորային գնահատմամբ: Ցավոք, մեր իրականության մեջ դեռևս շարունակվում է այն արատավոր երևույթը, երբ ուսուցիչն, ինչ-ինչ հանգամանքներից ելնելով, կողմնակալ վերաբերմունք է ցուցաբերում որոշ սովորողների, գնահատում ավելի բարձր, որը չի համապատասխանում տվյալ սովորողի գիտելիքների մակարդակին: Միևնույն ժամանակ խիստ "օբյեկտիվություն" է պահպանում մյուսներին գնահատելիս: Դա չի կարող չնկատվել դեռահասի կողմից, նա հիասթափվում է, այլևս չի ուզում սովորել, չի ձգտում ավելիին: Մեկ այլ պարագայում ուսուցիչն իր համար սահմանում է սովորողի գնահատման "մակարդակ", օրինակ՝ "4-ի, 5-ի, 6-ի սովորող" և երբևէ բարձր չի գնահատում տվյալ սովորողին, եթե նույնիսկ ինչ-որ առաջադրանք նա լավ է կատարել: Դեռահասը կորցնում է մոտիվացիան, դառնում անտարբեր,այլ հետաքրքրություններ և զբաղմունքներ փնտրում՝ պատճառաբանելով, որ միևնույն է, ինչքան էլ սովորի, այդ X գնահատականին է արժանանալու::

- Համադասարանցիների վերաբերմունքը:

Հասակակիցների հարգանքը վայելելու ցանկությունը դեռահասին խիստ զգայուն է դարձնում նրանց տված գնահատականների և կարծիքների նկատմամբ: Ընկերների հետ շփվելը այնպիսի մեծ արժեք է ներկայացնում, որ հետին պլան է մղում ուսման գործը: " Ընկերական կոդեքսի" օրենքներին համապատասխանելու համար, նույնիսկ մտավոր բարձր ունակություններ ունեցող դեռահասը, որ նախկինում փայլել է իր առաջադիմությամբ, հրաժարվում է դաս պատասխանել, քանի որ դա ընկերական

շրջանում համարվում է ամոթալի: Նա աստիճանաբար հեռանում է ուսումնական գործընթացից, առաջադիմությունը կտրուկ իջնում է: Մյուս իրավիճակը վերաբերվում է այն դեռահասներին, որոնք դասարանում այլ դիրք են զբաղեցնում, ունեն ավելի թույլ կամային հատկանիշներ, ավելի մեկուսացած են, կաշկանդված: Նրանք խուսափում են ակտիվ դասապրոցեսից, չեն մասնակցում քննարկումներին, դաս չեն պատասխանում՝ մտավախություն ունենալով ծաղրի ենթարկվելու, քննադատվելու դասընկերների կողմից: Նրանք ավելի ինքնամփոփ են դառնում, որոշները չեն ուզում այլևս սովորել կամ սովորում են դժկամությամբ և մակերեսորեն:

- Դպրոցական ծրագրի բարդությունը:

Հատկապես միջին դպրոց տեղափոխվելիս, նոր առարկաները՝ ծրագրային բարդ նյութով "խուճապ" են առաջացնում շատ երեխաների մոտ: Բարդ տերմինաբանությամբ գրված որոշ առարկաների դասագրքերը, դասանյութը երեխայի մոտ ստեղծում է վախ, տագնապ, իր ուժերի նկատմամբ անվստահություն: Որոշ ծնողներ դիմում են կրկնուսույցների օգնությանը: Որոշները ինքնուրույն չեն կարողանում հաղթահարել այդ դժվարությունները, հետ են ընկնում ծրագրից, չեն հասկանում նյութը, սկսում են չսիրել առարկան և չսովորել:

- Մասնագիտական կողմնորոշում և ծանրաբեռնվածություն այլ պարապմունքներով:

Ավելի բարձր դասարաններում՝ 8-9-րդ, երբ դեռահասները ինքնուրույն կամ ծնողների ուղղորդմամբ ծրագրավորում են իրենց ապագան, ընտրում են մասնագիտական որևէ ուղղվածություն, ուշադրությունը կենտրոնացնում են միայն իրենց հետաքրքրող առարկաների վրա և անտեսում են մյուս բոլորը՝ համարելով, որ դրանք իրենց պետք չեն գալու: Այդ է պատճառը, որ հենց այս դասարաններում կտրուկ ընկնում է սովորողների առաջադիմությունը: Կարևոր է նշել նաև կրկնուսույցների հետ լրացուցիչ պարապմունքներով մեծ ծանրաբեռնվածության արդյունքում գերհոգնածությունը, երբ, նույնիսկ մեծ ցանկության դեպքում, ուսումնական գործընթացին մեծ պատասխանատվությամբ վերաբերվող սովորողը ի վիճակի չի լինում մյուս դասերին ժամանակ տրամադրել և սովորել ինչպես հարկն է: Որոշ դեռահասների մոտ ուսումնական գործընթացի նկատմամբ կորչում է

հետաքրքությունը, երբ ծանրաբեռնվում են արտադպրոցական որևէ պարապմունքով: Հատկապես վերջին տարիներին շատ տղաներ, ընդ որում բարձր առաջադիմությամբ, տարվում են ֆուտբոլով, իրենց ողջ ժամանակը տրամադրում պարապմունքներին և դասին անպատրաստ լինելը պատճառաբանում ժամանակի սղությամբ կամ իրենց ապագան տեսնում են ֆուտբոլի ասպարեզում միայն: Հաճախակի դասերից բացթողումները ի վերջո հանգեցնում են նրան, որ կտրուկ ընկնում է առաջադիմությունը:

- Կախվածությունը հեռախոսից:

Թե՛ ծնողների, թե՛ ուսուցիչների կողմից որքան էլ փորձ է արվում սահմանափակել հեռախոսներից օգտվելու դեռահասի հնարավորությունները, այս խնդիրը շարունակում է մնալ ամենաչլուծվածը: Գաղտնի, թե բացահայտ, տանը, թե դպրոցում դեռահասը օրվա մեծ ժամանակահատված "հեռախոսի մեջ" է: Հեռախոսային խաղերը դարձել են շատ դեռահասների միտքը զբաղեցնող հիմնական նյութը: Դեռահասը կորցնում է հետաքրքրությունը դասի նկատմամբ, չի կենտրոնանում, քանի որ միտքը զբաղված է միայն խաղով, արդյունքում անհասկանալի է դառնում առարկան, դասանյութը, հետ է ընկնում ծրագրից, չի սովորում, ընկնում է առաջադիմությունը:

- Ուսուցչի կերպարը:

Երեխայի անձի ձևավորման, հոգեկան զարգացման լիարժեքության, կրթության իրավունքի իրացման, ստեղծագործական մտածողության, սոցիալական ակտիվության, բարոյական հոգեբանության զարգացումը մեծապես կախված է ուսուցչի անձից և արհեստավարժությունից: Ուսուցիչը պետք է օժտված լինի մասնագիտական և անձնային համապատասխան կարողություններով, տեղեկացված լինի տարիքային առանձնահատկություններին: Տարիքային հենց այս փուլում են լինում կոնֆլիկտներ ու բախումներ ուսուցիչների և աշակերտների միջև: Պատճառները բազմազան են, բազմաբնույթ, որոնցից հիմնականներն են՝ ուսուցչի և սովորողի փոխհարաբերությունների բնույթը, ուսուցչի անձնային որակները (դյուրագրգիռ բնավորություն, հիշաչարություն, վրեժխնդրություն, գոռոզություն), աշակերտի անձնային որակները, հոգեբանական տարիքային

առանձնահատկությունները, ուսուցչի կողմից իրավիճակի օբյեկտիվ գնահատելու կարողությունների բացակայությունը, անձնական խնդիրները, տրամադրության անկումը և այլն: Խնդիրները հարթելու կարևոր նախապայմանը ուսուցչի կողմից սովորողի գրագետ հոգեբանական վերլուծություն կատարելն է: Հոգեբանական խնդիրները, որոնք առաջանում են երեխայի մոտ, երբ նա նոր մուտք է գործում դպրոց, հաջորդ նոր դրսևորումներով ի հայտ են գալիս կրտսեր դպրոցից միջին դպրոց անցման շրջանում: Միջին դպրոց տեղափոխվելիս դեռահասների ուսումնական աշխատանքը բարդանում է ոչ միայն նոր առարկաների ներմուծմամբ, այլ նաև նոր ուսուցիչներ են հայտնվում, որոնց պահանջներին հարմարվելու պրոցեսը բավականին դժվար է, հատկապես այն երեխաների համար, որոնց ուսումնական գործունեությունը ունի թաքնված ու բացահայտ թերություններ: Տարրական դասարաններում դասվարի կողմից ավելորդ հովանավորության արդյունքում դեռահասի համար նոր մանկավարժի հետ հարաբերություններ հաստատելը երբեմն շատ դժվար է լինում: Երբ միաժամանակ հայտնվում են մի շարք ուսուցիչներ, որոնք միմյանցից տարբերվում են մասնագիտական վարպետության մակարդակով, անձնային առանձնահատկություններով, վարքագծով և սովորողի նկատմամբ ցուցաբերվող վերաբերմունքով, ապա վերջիններս սկսում են մանկավարժներին գնահատել ըստ տարբեր հատկությունների, որի հետևանքով սովորողները տարբերակված, ոչ միանման վերաբերմունք են դրսևորում տարբեր ուսուցիչների նկատմամբ, առանձնացնելով "սիրելի" և "չսիրված" մանկավարժներին: Այս շրջանում ուսուցչի նկատմամաբ ձևավորված վերաբերմունքը հազվադեպ է փոփոխվում հետագայում: Եվ հենց այս փուլում ուսուցչի դժվարության աստիճանը որոշվում է հենց այն հանգամանքով, թե կարողանում է արդյոք նա երեխաների հետ հարաբերությունները կառուցել: Յուրաքանչյուր նոր առարկա շարժում է դեռահասների հետաքրքրությունը: Ուսուցչից է կախված այդ հետաքրքրության պահպանումն ու զարգացումը: Այս փուլում շատ կարևոր է դասղեկի աշխատանքը: Որպես դասղեկ առնչվել եմ նման խնդրի, երբ ստանձնեցի 5-րդ դասարանի դասղեկություն 2020-2021 ուստարում: Խնդիրն առավել բարդ էր նրանով, որ ուստարին սկսեց սեպտեմբերի 15-ին՝ կորոնավիրուսային խիստ սահմանափակումներով, երբ երեխաները դպրոց էին հաճախում երկու խմբով՝ 2/3 օրերի հաճախականությամբ, երբ արգելված էին առկա ծնողական ժողովները,

ծնողհանդիպումները, իսկ ես չէի էլ դասավանդում իրենց (աշխարհագրության ուսուցչուհի եմ): Այս ամենից զատ, սեպտեմբերի 27-ին հայրենիքիս պատուհասեց աղետալի 44-օրյա պատերազմը՝ իր ողջ արհավիրքով, որը երեխաների համար մի անասելի հոգեկան ցնցում էր, պատերազմին մասնակից ծնող ունեինք և եղբայր, որ ցավոք մինչ այժմ համարվում է անհայտ կորած, մաթեմատիկայի ուսուցչուհին հոգեբանական ծանր վիճակում էր՝ հայրենի տունը, ընտանիքը Հադրութում էր գտնվում, իսկ տղան՝ պատերազմում: Եվ այս ողջ բարդ հոգեբանական իրավիճակում, որի մեջ թե՛ երեխաներն էին, թե՛ ուսուցիչները, թե՛ ծնողները կրթական գործընթացը պետք է շարունակվեր:

Երեխաների և ուսուցիչների համար նաև նորություն և բարդություն էր ներկայացնում շրջված դասարան մեթոդով ուսուցումը:

Նոր դասավանդող երկու մանկավարժների հետ գրեթե ամբողջ դասարանի հարաբերությունները երկար ժամանակ չէր կայունանում: Դասվարի "ծնողական հոգատարությամբ" վերաբերմունքին սովոր երեխաները չէին հարմարվում նոր ուսուցիչների մոտեցումներին, նույնիսկ ձայնի տոնայնությունից վախի զգացողություն էին ապրում: Ես ամեն օր ահազանգեր էի ստանում ծնողներից, որ երեխան չի ցանկանում սովորել, չի ցանկանում դասի գալ այդ օրը, երբ ունեին տվյալ առարկան, որ վախենում է պատասխանել, թեև լավ պատրաստված է, որ չի հասկանում ուսուցչի բացատրածը, որ շատ ցածր է գնահատվում և այլ նմանատիպ խնդիրներ և իրավիճակներ: Ես սկզբնական շրջանում կազմակերպում էի ծնող-ուսուցիչ օնլայն հանդիպումներ, շփումներ, քննարկումներ: Սակայն հանդիպումներն անցնում էին երկկողմանի հուզական միջավայրում և խնդիրները լուծվելու փոխարեն ավելի էին սրվում, իսկ երեխաների առաջադիմությունն ավելի ընկնում: Ինքս չէի ճանաչում ո՛չ ծնողական համայնքին, ո՛չ երեխաներին:

Սկսեցի հաճախակի դասալսումներ կատարել, մանրամասնորեն դիտարկել երեխաների վարքը, նրանց դրսևորումները դասապրոցեսի ընթացքում, կարողությունները, մտածողության սահմանները: Անհատական հանդիպումների միջոցով (հատկապես այն երեխաների, որոնց ծնողները վստահեցնում էին, որ իրենց երեխայի ունակություններն ավելին են, քան որ գնահատվում է), տարբեր

առաջադրանքների միջոցով պարզեցի ուսումնական գործընթացում նրանց մասնակցության, ըմբռման, վերլուծություն կատարելու կարողությունները: Դասվարի հետ պարբերաբար շփումների ընթացքում պատկերացում կազմեցի ծնողական համայնքի, առկա խնդիրների մասին: Դասավանդող ուսուցիչների հետ ամենօրյա ռեժիմով քննարկում էինք օրվա արդյունքները երեխաների հետ կատարված աշխատանքի վերաբերյալ, կիսվում մեր տեսակետներով, հիմնավորում դրանք, միմյանց հետ քննարկում հոգեբանական ընկճվածության մեջ գտնվող երեխաների հետ աշխատելու մոտեցումներ: Զուգահեռաբար հեռախոսազրույցներ էի անցկացնում ծնողների հետ, համբերատար լսում նրանց, հիմնավորված փաստարկներով ծնողներին ներկայացնում դասարանում տիրող օբյեկտիվ պատկերը: Երեխաների հետ անմիջական, անկեղծ զրույցների, նրանց աշխատանքների թերությունների վերաբերյալ փաստարկված, համոզիչ բացատրությունների շնորհիվ հասանք այն բանին, որ ստեղծվեց փոխհամագործակցային առողջ մթնոլորտ երեխա, ծնող և ուսուցիչ հարաբերությունների դաշտում: Երեխաները հարմարվեցին նոր ուսուցիչներին, նրանց մոտեցումներին, թուլացավ լարվածությունը նրանց վարքում, սկսեցին իրենց դրսևորել ավելի համարձակ և ինքնավստահ, արդյունքում նկատելի փոփոխվեց դասարանի ընդհանուր առաջադիմությունը: Իհարկե, խնդիրներն ամբողջությամբ չլուծվեցին, բայց խուսափեցինք սուր կենֆլիկտներից, դասընթացը մտավ բնականոն հունի մեջ, ուսուցիչների մոտեցումները մեղմացան՝ համահունչ դառնալով այդ արտակարգ իրավիճակին, որի մեջ անկախ մեր կամքից հայտնվել էինք բոլորս՝ կապված կորոնավիրուսային սահմանափակումների, հիբրիդ ուսուցման, պատերազմի թողած հոգեբանական ընկճվածության հետ:

Ամփոփելով, ցանկանում եմ նշել, որքան էլ բազմազան և բազմաբնույթ են դեռահասի ուսումնառության վրա ազդող խնդիրներն ու պատճառները, մեծ մասամբ ուսուցչի դերն ամենաորոշիչն է լինում երեխայի, առավել ևս դեռահասի կյանքում:

Եզրակացություն

Մանկավարժը սովորողների հետ իր հարաբերությունները պետք կառուցի փոխադարձ հարգանքի վրա: Մանկավարժը իրավունք չունի մոռանալու, որ գործ ունի զարգացող մարդու հետ, որը հատկապես դեռահասության տարիքում ատում է սուտը, անարդարությունը: Նա պետք է հարգի սովորողներիի անհատականությունը՝ անկախ նրանց տարիքային և անձնային առանձնահատկություններից, դավանանքից, ազգային կամ սոցիալական ծագումից, ծնողների ունեցվածքի կամ հասարակական դիրքի կարգավիճակից: Նա պետք է պատշաճ ուշադրության արժանացնի սովորողների արտահայտած կարծիքներին և հայացքներին և չպարտադրի իր հայացքները: Մանկավաժական հատուկ տակտ է պահանջվում դեռահասին դատապարտելու կամ պատժելու համար միջոցների կիրառությունը: Նույնիսկ ամենախիստ միջոցները չպետք է ստորոցնեն դեռահասի անձը և ոտնահարեն նրա արժանապատվությունը: Դաստիարակչական ներգործություններ կիրառելիս մանկավարժը պետք է հենվի դեռահասի անձի զարգացման օրինաչափությունների, տարիքային և անհատական առանձնահատկությունների և հնարավորությունների իմացության վրա: Նա պետք է նպաստի սովորողների մեջ դրական անձնային հատկանիշների և միջանձնային որակների զարգացմանը:

Ընդհանրացնելով բոլոր գործոնները մեկ փնջում, կարելի է ասել, որ գլխավորը դասարանական առողջ մթնոլորտն է, որն իրենից ենթադրում է մի միջավայր, որտեղ և՛ երեխաների, և՛ ուսուցիչների կողմից անշեղորեն պահպանվում են մարդկային հիմնարար արժեքները՝ ազնվություն, վստահություն, արդարություն, հարգանք և պատասխանատվություն: Դրանցից որևէ մեկի նույնիսկ աննշան խախտումը, շեղումը նկատվում է դյուրազգաց դեռահասի կողմից և կարող է որոշիչ դեր ունենալ նրա գործողություններում, վարքում, առաջադիմության վրա:

Օգտագործված գրականության ցանկ

ПРОБЛЕМЫ ФОРМИРОВАНИЯ ИНФОРМАЦИОННОЙ КУЛЬТУРЫ И ИНФОРМАЦИОННОЙ ЭТИКИ ВУЗОВСКОГО СООБЩЕСТВА РОССИИ, Информационная культура и информационная этика вузовского сообщества: понятийный и ценностный аспекты

https://www.mapa.am/dastiarakutyany-hatuk-khndirner/

https://parstoday.com/hy/radio/programs-i35587

https://www.doctors.am/derahasutyun

http://www.ysu.am/files/Hator%203.%20pp.%20149-153.pdf

http://ysu.am/files/haj%20derahasi%20arjehamakargi%20poxakerpumnery.pdf

http://ijevanlib.ysu.am/tariqayin-ev-mankavarjakan-hogebanutyun/

http://www.apnet.am/journal/datas/articles/284.pdf

http://publishing.ysu.am/files/Socialakan_mankavarjutyun.pdf